

քին գործոց նախարար Միլլերանի, ինչպէս նաեւ զանազան թուականներով գիրեր կը մատուցանէ Ֆրանսոս, Հանրապետութեան նախագահ Տէշանելի, ծերակոյտի նախագահ Լէոն Պոլ-ժուալի, Սան-Ռէմօի գերագոյն խորհուրդի նախագահ Նիթթիի եւ այլ բարձրաստիճան պաշտօնատարներու, կը տեսակցի պատերազմական նախարար Անտրէ Լըֆէրին, արտաքին գործոց Յանձնաժողովի անգամ Պրիանի հետ. այցելութիւնը կ'ընդունին նախկին նախարար եւ հայասէր Տընի-Քօշէնի, եւ այլն: Ասոնց ամենուն ալ կը պարզէ Կիլիկիոյ Հայոց կրած ծանր տագնապը: Այս ուղեւորութեան առթիւ Ապրիլ 17ին Սահակ կթղ. ուխտագնացութիւն մը կատարած է Սէն-Տընի թաղուած Հայոց Լէոն Ե. ի դամբարանին եւ «Հոգւոց» մը կարգացած է եւ յանուն Կիլիկիոյ հայութեան պսակ մը դնելով արտասանած է սրտառուօջ ուղերձ մը: Վենետիկի Ս. Ղազարի Մխիթարեանց Միաբանութեան այցելութիւն մը տալէն յետոյ այցելած է նաեւ Լոնտրա եւ Մանչէսթըր: Կթղ.ը իր այցելութեանց մէջ ամէն տեղ ընդունուած է սիրալիր եւ պատշաճ մեծարանքներով եւ փոխադարձաբար շնորհած է իր օրհնութիւնը: Կթղ.ին ուղևորութիւնը կը տեւէ ութ ամիս, նոյն տարւոյն Նոյեմբեր 1ին ողջամբ կը ժամանէ Կիլիկեցի ժողովրդեան մօտ ու անոր կը հաղորդէ այն յոյսերը ու խոստումները որոնք շուայլուեցան իր կատարած գիմումներուն առթիւ: Յետոյ պատահած արիւնոտ եւ վշտալի դէպքերը յոյց տուին շուայլուած նոյն յոյսերուն և խոստումներուն արժէքը: Կթղ.ին այս ուղևորութեան եւ Կիլիկիոյ վերջին ցաւալի ազէտքներուն մանրամասնութիւնները տեսնել Վ. Լ. Սուպէսէրեանի գրած Օրագրութիւն ուղեւորութեան յետոյ Սահակ Բ. Կարողիկոսի Կիլիկիոյ խորագիրով գիրքին մէջ (տպ. Հալէպ, 1928):

Կիլիկիոյ ժողովուրդը Սիւրիոյ կողմերը ստիպուած ըլլալով դադթել, Սահակ կթղ. վերջնականապէս թողուց Սիւսի իր Աթոռը, եւ հաստատեց զայն Սիւրիոյ մէջ: Քանիցս դիմած էր Ս. Յակոբեանց Աթոռին խնդրելով որ Սիւրիոյ Երուսաղէմական կալուածներուն յանձանձու մը Միաբանութեան պահուելով՝ եկեղեցիները, դպրոցները ու վանատունները իրեն տրամադրութեան տակ դրուին Կիլիկիոյ կաթողիկոսութեան նորոգ կազմակերպութիւնը դիւրացնելու համար: Ս. Յակոբեանց վանքին